

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրապետության հողային ֆոնդի նպատակային և արդյունավետ օգտագործման հիմնախնդրի լուծման առաջնահերթություններից ելնելով վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում մշակվում և իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, որոնցից առավել առանցքային նշանակություն ունեցավ համայնքների խոշորացման ուղղությամբ իրականացված և ներկայումս շարունակվող միջոցառումները: Հողաշինարարության տեսանկյունից համայնքների խոշորացումը և դրանից բխող հետևանքներն առաջին հերթին առարկայական կերպով կապված են համայնքների վարչատարածքային սահմանների և, հետևաբար, հողային ֆոնդի կառուցվածքի փոփոխությունների և դրանց արդյունավետ օգտագործման նոր ուղիների բացահայտման հետ: Նկատի ունենալով հանրապետության գյուղական համայնքների հողային ֆոնդի առկա կառուցվածքը, դժվար չէ նկատել, որ գյուղական համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են համայնքի հողային ֆոնդի գրեթե 70-85 %: Բնականաբար համայնքների խոշորացման պայմաններում գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը նպատակամղված միջոցառումների մշակումը, կարծում եմ, ունի կարևոր գործնական և տեսական նշանակություն, հետևաբար ներկայացված ատենախոսական թեման իր

ընույթով արդիական է և ուղղորդված է Վայոց ձորի մարզի Գլաձոր խոշորացված համայնքի օրինակով բացահայտելու այս խնդիրների հնարավոր լուծման ուղիները:

Ատենախոսության գիտական դրույթների բովանդակությունը և եզրահանգումների ճշտությունը

Ատենախոսական աշխատանքի նպատակն է՝ կիրառելով արդի թվային տեխնոլոգիաները, ուսումնասիրել Վայոց ձորի մարզի Գլաձոր խոշորացված համայնքի հողային, ջրային պաշարները, հողօգտագործման և ջրօգտագործման ցուցանիշները, կատարել թեմատիկ քարտեզագրման աշխատանքներ՝ հիմք ընդունելով մաթեմատիկական և տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման մեթոդներով հիմնավորված գյուղատնտեսական հողօգտագործման քանակական և որակական ցուցանիշները: Ատենախոսության առաջին գլխում անդրադարձ է կատարված գյուղատնտեսության զարգացման և հողաշինարարության արդի խնդիրներին, մասնավորապես՝ ուսումնասիրվել է տարբեր գրական աղբյուրներում ներկայացված հողային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրները: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել հողամասերի խոշորացման հիմնախնդիրներին, առկա ձեռքբերումներին, հնարավորություններին և խոչընդոտներին: Բավականին մանրամասնորեն ներկայացված է կոոպերացիայի միջազգային փորձի արդյունքները, դրանց զարգացման հեռանկարները և այդ արդյունքների տեղայնացման հնարավորությունները հանրապետության ներկայիս պայմաններում: Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է հողային պաշարների արդյունավետ կառավարման և օգտագործման խնդիրներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով հողաշինարարության խնդիրների ճշգրիտ լուծման արդյունքներին: Ներկայացված են միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառություն գտած մի շարք անալիտիկ մոդելներ և լուծումներ, որոնք թույլ են տալիս տարածական առումով գնահատել հողամասերի համախմբվածությունը, հեռացրվածությունը, մակերեսները, սահմանների վիճակը, հողերի էրոզացվածության աստիճանը և այլ հողաշինարարական կարևոր ցուցանիշներ: Այս գլխում ներկայացված են նաև ուսումնասիրվող

օբյեկտի բնակլիմայական, հողաշինարարական պայմանները և տրված է հետազոտության մեթոդիկան:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են խոշորացված համայնքների պայմաններում հողամասերի օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնահարցերը: Ցույց է տրված առանձին հողատեսքերի հնարավոր միավորման հողաշինարարական սխեմաները, վերլուծության են ենթարկվել խոշորացումից առաջ և հետո համայնքների հողային ֆոնդի կառուցվածքային փոփոխությունները, բնակչության գյուղատնտեսական ապրանքներով ինքնաբավարարվածության պայմանից ելնելով՝ հիմնավորվել է գյուղատնտեսական հողատեսքերի փոխակերպման, միավորման սխեմաները: Մանրամասնորեն անդրադարձ է կատարվել արոտավայրերի հողաշինարարական կազմակերպման խնդիրներին՝ հաշվի առնելով արոտների թույլատրելի բեռնվածության, արոտի բերքատվության, օրական կերապահանջի ցուցանիշները: Գնահատվել է արոտների օգտագործման արդյունավետությունը և մշակվել կերի պահանջի հողաշինարարական հիմնավորումները տարբեր մեծության անասնապահական ուղղվածություն ունեցող ֆերմերային տնտեսությունների համար: Այստեղ անդրադարձ է կատարվել նաև գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման արդյունքների ճշգրտման մի քանի հարցերին:

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացված են հողային և ջրային պաշարների արդյունավետ կառավարման հիմնահարցերը, դիտարկված են գյուղատնտեսական հողատեսքերի օպտիմալ կառուցվածքի սահմանման խնդիրները խոշորացված համայնքների պայմաններում: Ներկայացված են Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի հողակադաստրային քարտեզագրման թվայնացման արդյունքները: Այս հետազոտությունները թույլ են տվել հեղինակին խոշորացված համայնքի պայմաններում բացահայտել Գլաձոր համայնքի հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նոր և հեռանկարային հնարավորությունները:

Ատենախոսության գիտական դրույթները և ստացված արդյունքները արժանահավատ են, քանի որ դրանք ստացվել են հողաշինարարական ճշգրիտ մեթոդների և մոդելների կիրառմամբ: Ատենախոսության 8 եզրակացությունները ամբողջությամբ

բխում են հետազոտության նպատակից, առաջադրված խնդիրներից և ձևակերպված գիտական նորույթի բովանդակությունից:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում համայնքների խոշորացման հիմնական նպատակները՝ կատարվել է Վայոց ձորի մարզի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացման, տարածքների հողաշինարարական կազմակերպման արդյունքների գնահատում, ելնելով միջհամայնքային համագործակցության զարգացման ուղիներից՝ հիմնավորվել է գյուղատնտեսական ցանքատարածքների օպտիմալ կառուցվածքը, բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, արոտաշրջանառության կազմակերպման անհրաժեշտությունը: Բացահայտվել են հողակադաստրային քարտեզագրական հիմքերի անճշտությունները և առաջարկվել են հողակադաստրային ուսումնասիրությունների իրականացման ճշգրտված նոր հողագիտական քարտեզագրական մասշտաբային նորմատիվներ: ArcGIS միջավայրում մշակվել են Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի գյուղատնտեսական հողատեսքերի թվային քարտեզները՝ հողային ֆոնդի հաշվառման, գնահատման և վերլուծության նպատակով:

Ատենախոսության գնահատականը, դրական և բացասական կողմերը

Ատենախոսությունը շարադրված է 141 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, 112 անուն գրականության ցանկից, 17 հավելվածներից, ներառում է թվով 21 աղյուսակ և 43 նկար: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 8 գիտական հոդվածներում, այդ թվում երեքն առանց համահեղինակների: Ստացված արդյունքները զեկուցվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ամենամյա միջազգային գիտաժողովներում, Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-

ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովում, Իտալիայի Սալերնոյի համալսարանի «Քաղաքային ճարտարագիտություն» ֆակուլտետի գիտական սեմինարում, Ինդոնեզիայի Սեպուլուի Նոփեմբեր Տեխնոլոգիաների ինստիտուտի «Գլոբալ գիտելիքների շնորհիվ տեղական խնդիրների լուծումը» թեմայով ծրագրի շրջանակներում, ինչպես նաև հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հրատարակված հոդվածներում: Սեղմագիրն ամբողջապես արտահայտում է աշխատանքի գիտական դրույթները և կիրառական արդյունքները: Աշխատանքի եզրակացությունների բովանդակությունը բխում է ատենախոսության հետազոտությունների արդյունքներից, դրանք արտացոլում են ստացված գիտական արդյունքների տեսական, գործնական և մեթոդական նշանակությունը հողերի արդյունավետ օգտագործման ոլորտում: Չնայած վերը նշված դրական կողմերի՝ աշխատանքում առկա են մի շարք թերություններ, որոնց մասին ներկայացված են ստորև դիտողություններում.

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակը նշում է, որ ֆերմերը պետք է տեղեկացված լինի իր կողմից տնօրինվող կամ տիրապետվող հողամասի որակական և քանակական ցուցանիշների մասին, սակայն հեղինակը չի նշում թե դա կոնկրետ ինչպիսի մեխանիզմներով պետք է իրականացվի:

2. Աշխատանքում անդրադարձ է արված հողամասերի խոշորացման միջազգային փորձին, սակայն ցանկայի կլիներ ներկայացվեր այս ցուցանիշները կոնկրետ հետազոտվող պետությունների օրինակով, քանի որ դրանք էապես տարբերվում են իրարից, ինչպես նաև նշվեր, թե որ արդյունքներն են կիրառելի Հայաստանի Հանրապետության համար:

3. 2.2. ենթագլխում ներկայացված են մի շարք հողաշինարարական խնդիրներ, որոնց լուծման ճանապարհով կարելի է հասնել հողերի նպատակային և արդյունավետ օգտագործմանը: Սակայն, աշխատանքում չի բացահայտված, թե տվյալ խնդիրների լուծման արդյունքներն ինչպես պետք է իրականացվեն, քանի որ հողաշինարարությունը, համաձայն օրենսդրության, համարվում է պետական միջոցառում, իսկ մասնավոր հատվածը, որը վճռական կողմն է այս խնդիրների,

կարծես ակտիվ չի ներգրավված այս գործընթացներին:

4. Գյուղատնտեսական հողերի կադաստրային գնահատման հարցերին անդրադառնալիս հեղինակն առաջարկում է կատարել հողագիտական կադաստրային հետազոտությունների իրականացման մասշտաբային նորմատիվների որոշակի փոփոխություն: Սակայն, ցակալի կլիներ լուսաբանվեր այս փոփոխության տնտեսական ցուցանիշները, ինչպես և ովքեր պետք է փոխհատուցեն այդ ծախսերը, նկատի ունենալով, որ այս գործընթացում գործ ունենք հազարավոր փոքր տնտեսությունների և հողասեփականատերերի հետ:

5. Ատենախոսության 4-րդ գլխում ներկայացված են Գլաժոր համայնքին վերաբերող թվային միջավայրում քարտեզագրական նյութերի արդյունքները: Սակայն աշխատանքում ներկայացված չեն այդ քարտեզների կիրառման արդյունքները հողային հարաբերությունների վրա, և դրանք ինչպես պետք է ներդրվեն տնտեսությունում, եթե հաշվի առնենք, որ կադաստրային քարտեզագրման հիմքերում դեռևս առկա են մի շարք տարածական սխալներ:

6. Ատենախոսության 40-րդ էջում 2.2.1 բանաձևը ներկայացված է որպես հողաշինարարական խնդիրների անալիտիկ կախվածություն, այնինչ դա, ընդհանրապես, մակերեսների հաշվման հայտնի անալիտիկ եղանակն է:

Եզրակացություն

Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաժոր խոշորացված համայնքի պայմաններում» թեմայով ատենախոսական աշխատանքը շարադրված է մեթոդապես ճիշտ և մասնագիտական տրամաբանական հաջորդականությամբ: Հրատարակված 8 տպագիր գիտական աշխատանքներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության թեմայի նպատակը, բովանդակությունը, գիտական արդյունքները և եզրակացությունները: Ատենախոսության սեղմագիրը ձևակերպված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան, այն արտացոլում է ատենախոսության հիմնական եզրահանգումները և գիտական դրույթները:

Հետազոտությունների ընթացքում հեղինակը ցուցաբերել է նորագույն տեխնոլոգիաների գերազանց իմացություն:

Գտնում եմ, որ ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ-ում աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Ավետիք Արմենի Ալեքսանյանն արժանի է 2.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի, հողաշինարարության
և հողային կադաստրի ամբիոնի պրոֆեսոր,
տեխնիկական գիտությունների դոկտոր

 Պ.Ս. Էֆենդյան



տ.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս. Էֆենդյանի ստորագրությունը հաստատում եմ ՀՀԿ-ի
գիտական քարտուղար, գ.գ.թ., դոցենտ

 Գ.Գ. Ավագյան